


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 8 Մճ.
Գաւառացի 40 Մճ.
Վեցամսեայ Կ. Պոլսոյ 4 Մճ.
Գաւառացի 5 Մճ.
Ծանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըը-
լայ :



ԼԵԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 22 ԱՊՐԵԼ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Երկու օրէ 'ի վեր լուրերն աւելի պատերազմական են : Զանազան զը-
րոյցներ կը լսուին որոց ստուգութիւնն
երաշխաւորել անկարելի է : Կըսուի
թէ Ռուսական բանակին նոր ընդհա-
նուր հրամանատար թօղէպէն զօրա-
վարը Շուստուի, վարնայի և Պաթու-
մի պարպուիւն և Ռուսաց յանձնուիլը
կը պահանջէ : Շուստուի հրամանա-
տար Ֆաղլը փաշան ապրիլ 8/20 ին
Ռուսաց հրամանատարէն հրաւեր ըն-
դունած էր ութ աւուր մէջ մեկնելու
և յիշեալ բերդն յանձնելու, սակայն
Ֆաղլը փաշա հոն կեցաւ, և անկէջ 'ի
վեր բան մը չեղաւ : Պաթումի կողմը
Ռուսաց Օկլոպիտի զօրավարը Տէրվիշ
փաշային հետ տեսակցեր և խնդրեր
էր որ քաղաքը յանձնէ, բայց Տէր-
վիշ փաշան պատասխանէր թէ ինչ
նազարութեան որոշած երեք ամիս
պայմանաժամը տակաւին վերջացած
չէ, ուստի Ռուսաց զօրավարը մեկ-
նելով թիֆլիզ դնացած էր : Երսուն
հաղարէն աւելի լազ Պաթում հա-
ւաքուելով մտադիր են եղեր դիմադ-
րելու : Եթէ Ռուսը անպատճառ յար-
ձակմամբ առնուի ուղեն իրենց եր-
կիրը : միանգամայն բաղմամբիւ սոտ-
րագորութեամբ ուղերձներ զրկած են
Սնդղիոյ նախարարաց' պաշտպանու-
թիւն խնդրելու համար, քանզի Օսման-
եան կառավարութիւնն իրենց ծանու-
ցեր է թէ չպիտի կրնայ պաշտպանել
զիրենք և ազատ են իրենց ուղած կեր-
պիւ շարժելու : Պաքաններուն մէջ
Ռուսաց և Պաղլարացի դէմ Բօմաքնե-
րուն ապստամբութիւնը տակաւին կը
շարունակէ, և բազմաթիւ անգթութե-
թիւններ կը նշանակուին Պաղլարաց
կողմէ գործուած :

Քաղաքական բանակցութեանց դա-
ւով, կերելի թէ Պիսմարը իշխանն ան-
յաջող միջնորդութեան մը վրայ չը
կրնալով մեծ յոյս դնել, պարզապէս
երկու կողման գրութիւններն իրարու
կը հաղորդէր առանց դիտողութեան.
Բայց թերեւ տեսնելով որ այս ալ օ-
գուտ մը չունեցաւ, և գուցէ իւր
հիւանդութիւնը պատճառելով զԱնգ-
ղիա և զՌուսիա յորդորած կերելի
ուղղակի բանակցելու : Բայց ահա հե-
ռաւորը կը ծանուցանէ թէ այս ուղ-
ղակի բանակցութիւնն ալ չէ, յաջողութե-
ան երկու հակառակորդներն համաձայ-
նեցնելու նպատակաւ Պիսմարը իշ-
խանին ըրած առաջարկութիւններն
'ի դերեւ ելան' Սնդղիա միշտ գր-
ւարութիւններ ու առարկութիւններ
հանելով, և այսպէս նախապատրաստա-
կան դեպքանախորհուրդ մը կազմե-
լու և Սնդղիական նաւատորմն ու Ռու-
սաց զօրքը Կ. Պոլսոյ շրջակայներէն հե-
ռացնելու առաջարկութիւնները տա-

կաւին չկրնան դործադրել թէև երէկ
կը զրուցուէր թէ Ռուսը Այսթէֆա-
նուէն Զաթալայի կողմերը պիտի քաշ-
ւին : Եթէ երկուստեք զօրութիւնները
վտանգաւոր մերձակայութիւնը թող-
լով հեռանան, հայտութեան յոյսը
կրնայ իրանալ : Բայց տակաւին այս
յոյսը խիստ տկար է, քանզի կրնայ
ըլլալ որ Ռուսը Զաթալայ քաշուին,
և երբ պատերազմի հաւանականու-
թիւնը զօրանայ, կէլիպօլուի կողմը
մեծ զօրութիւն լցնելով Օսմանեան
զօրքն հրաւիրեն որ կէլիպօլուէն քաշ-
ւին, որպէս զի Բ. Դրան չեղբորութիւնն
Սնդղիոյ կողմէն բռնաբարութեամբ կէ-
լիպօլու զօրք չհանուի : Այն ժամանակ
Օսմանցիք դիմադրելու կը պարտա-
ւորին, և հաւանական է որ իրենց
ռուսներն Սնդղիական նաւատորմին
ռուսներուն հետ 'ի միասին մի և նոյն
ուղղութեամբ մեկնին, այն է Ռուսաց
դէմ :

Հիմա առաւ Սնդղիոյ և Ռուսիոյ
անհամաձայնութիւնը տակաւին կե-
ցած է : առաջինը միշտ կը պահան-
ջէ որ Ռուսիա յայտարարէ թէ Այ-
սթէֆանուի դաշնագրութեան ա-
ռանձնակի կերպիւ տէրութեանց հա-
ղորդումը տէրութեանց խորհրդին
ներկայացնելու հաւասար է, այսինքն
Ռուսիա պարզապէս դաշնագրութիւ-
նը տէրութեանց ներկայացնելով ա-
նոյն իրաւունքը ծանչէլ զայն բարե-
փոխելու : Իսկ Ռուսիա մինչև ջարդ-
այս առաջարկութիւնը չընդունելու,
քանզի Ռուսաց հասարակայնի կար-
ծիքը սաստիկ յուզուած է, և աղբա-
լին նուաստութիւնն մը կը համարուի
Ռուսական արեամբ ձեռք բերուած
դաշնագրութիւն մ'իւրաքանչեւ
նին ներկայացնելու : Այս երկու ծա-
րերուն միջինը գտնել դժուարին է,
թէ և կրնայ կարծուիլ որ եթէ խնա-
րայի դեպքան Շուստուի կողմը կոր-
չաքով իշխանին տեղ անցնի, Ռուսիա
կարելի է զիջումներ ընէ :

Առ այժմ Ռուսը նոր պատերազմի
մը կը պատրաստուին. նոր զօրք կը
գրեն. զինուորական կըթութիւնը
մեծ փութով կը շարունակեն. կեդ-
րոնական Ասիոյ կողմը՝ Թաշքենտ և
Օրէնպուրի՝ զինուորական շարժում
ներ կընեն, որ կրնայ կասկած տալ
թէ Հնդկաստանի վրայ այն կողմէն
արշաւանք մը կը խորհին. պատերազ-
մական նաւեր պատրաստելու համար
աղբային հանգանակութիւն կը բա-
նան. Ռուսմանիայէն իրենց հազար
դակցութիւններն ապահովելու հա-
մար պէտք եղած կէտերը զօրք կը
գրաւեն հակառակ Ռուսմանիոյ բո-
ղոքներուն, որ իւր զօրքը Բարբաթ-
եան լեռանց կողմը տարած է Ռու-
սաց հետ կուռի չընունելու համար :
Վերջապէս ամեն բան կը ցուցնէ թէ
Ռուսիա Բրիտանական առիւծին մը
ուրիշներուն դէմ՝ զիջում ընելու

միտք չունի, հետեւաբար Սնդղիա իւր
կողմէն նմանապէս պատրաստութիւն
ները թուլցուցած չէ, և իւր զօրքն
Հնդկաստանէն մեկնիլ սկսած է դէպ
'ի Մալթա, ուրկէ նշան մը տրուե-
լուն պէս Արևելք պիտի գայ, և այն
ատեն Արևելեան նոր պատերազմ մը
տեղի պիտի ունենայ, որոյ տեղում
թիւնն ու վախճանն այժմէն դուշա-
կել անհնարին է :

Լէվընթ Հէրըլտ լրագրին երեք-
չաքթի աւուր թուոյն մէջ Հայաստա-
նի վիճակին վրայ Օսմանեան Հայու-
մ'ի Ռուսի մը մէջ խօսակցութեան
ձևով հրատարակած յօդուածը մեր
նախընթաց թուով թարգմանած
էինք : Այս խօսակցութիւնն իրական
կարծելու չափ պարզամիտ մէկը չկը-
նար գտնուիլ, քանզի Հայուն բերա-
նը դրուած խօսքերուն մէջ շատ մը
կէտեր կան որք հայկական դժարութե-
մէն ներկայացնելու : Սաղոյ է որ Բիւր-
դարանայի, և տեղական իշխանու-
թեանց անհոգութիւններն ու դեղ-
դեղումներն ալ վերջին ծայր դա-
տապարտելի և անգունելի են, սա-
կայն Հայ մը, մանաւանդ ընկի Հա-
յաստանցի մը չկրնար Բիւրդերն ու
Չէրքէզները վաղուց 'ի վեր իրեն հայ-
րենակից գտնուող իսլամաց ամենա-
մեծ մասին հետ չլիովել, և տեղա-
կան իշխանութեանց պարտաւարացու-
թիւններուն պատասխանատուութիւ-
նը բովանդակապէս կեդրոնական կա-
ռավարութեան վրայ ծանրացնել : Բ.
Դուռն իրեն եղած բողոքները միշտ
նկատողութեան կառնու, և պէտք ե-
ղածը կը անօրինէ, ինչպէս անցեալնե-
րը Մշայ վանուց պատուիրակներուն
աղբարաւորն Առաջին նախարարին
խորհրդականին կողմէն մեծ հա-
մակրութեամբ ընդունուելով պէտք
եղած հրամանները տրուեցան : Այս-
պիսի հրամանաց շատ անգամ ան-
գործադրելի մնալուն առաջին առնը-
ւելու կամաւելի ազդու կերպիւ դո-
ժագրուելու համար հարկաւ կեդ-
րոնական կառավարութիւնը միջոց-
ներ ձեռք պիտի առնու, երբ ընդ-
հանուր բարենորոգմանց խնդիրը
գարձեալ օրակարգն անցնի, և երբ
կառավարութիւնը ներկայ հոգերէն
ազատելով իւր ուշադրութիւնն Եւ-
րոպիոյ օժանդակութեամբ երկրին
հիմնական բարեօրոգման վրայ դարձու-
նէ : Հետեւաբար Հայը բոլորովին իւր
յոյսը կտրած չէ Օսմանեան կառավա-
րութեան բարի դիտաւորութիւններ
ընէ և Եւրոպիոյ օգնութիւնէն, որպէս
զի գլխավորն Ռուսիոյ դիրքն ինչայ,
կամ յոյսը միմիայն օտար պաշտպանու-
թեանց վրայ դնէ, որք մինչև հիմայ
օգուտ մը չեն տուած : Ռուսիա թուր-
քիոյ Հայոց նիւթական բարեք մ'ը-
րած չէ, քանզի Այսթէֆանուի դաշ-

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գացած լրագրաց ճանրու-
ծալքը խմբագրութեան վրայ է :
Լրագրոյ վերաբերեալ նամակ
կամ որ և իցի գրութիւն խմբագիր
— Տնօրէնին պիտի ուղարկուի, Ղարա-
թի իսկ Աստուրքէրար Հաստիսի թիւ
198, Նօրօ իսան, Մասիսի գրասեն-
եակը :
Հանրու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր :

Նազարութեան 16րդ յօդուածին տրա-
մագրած վերադարձն բարենորոգում
ներն անհնար է որ բարիք մը համար-
ուին : Իսկ Եւրոպա, որոյ բարոյական
ազդեցութեան օգուտները ժխտել
չենք ուղեր, քսանհինգ տարիէ հե-
տէ շատ դժարեցաւ Արևելեան խնդ-
րոյն հետ առանց Հայոց յառաջդի-
մութեան նիւթապէս օգնելու : Եթէ
Հայերը կրցեր են ազգային հաստա-
տութիւններ ունենալ, դպրոցներ
հիմնել, մտաւորապէս որչափ կարելի
է յառաջագրելով, իրենց աշխատու-
թեան և Օսմանեան կառավարութեան
պաշտպանութեան շնորհիւն է : Այս
սկզբանց պատճառաւ Հայը չկրնար
բաժանման սկզբունքն իւր շահուց
նպատակաւ համարել, իւր հայրե-
նակցաց մեծագոյն մասին հետ իւր
մտերմական յարաբերութիւնները վը-
տանդել, կամ կայսերական կառա-
վարութեան քով իւր ունեցած պատ-
ուաւոր դիրքը թողուլ : քանզի գիտե-
նք, և ինչպէս խնդրուի, յորոց շատ
անգամ խորաքննուած, յորոց շատ
տաղնապէս, դարման կրնայ գտնը-
ւիլ : Լէվընթ Հէրըլտի Հայը կըսէ նաև
թէ Սնդղիա Հայաստանն աւերակ
դարձնել կուզէ, որպէս զի Ռուսիա
հոն չափէ, թէ թուրքիա Հայերը բը-
նաջինջ ընելու քաղաքականութիւն
բռնած է, թէ Օսմանեան կառավա-
րութիւնը կառավարութիւնն չէ, և
այլն : Բայց այս կարծիքները խիստ
անտեղի են, որպէս զի արժանի հա-
մարինք դանդաղ մի առ մի հերքել :
Կարծենք Հայուն դժարութեմը ճշդիւ
կը բացատրենք, եթէ ըսենք թէ իւր
փափաքը թուրքիոյ ընդհանուր բա-
րենորոգումն է՝ Եւրոպիոյ շահուց
համաձայն, առանց երկիրը բաժա-
նելու և պառակտելու, յորմէ ինք ևս
իրեւ մաս մը վնաս պիտի կրէ : Ար-
դարութիւն և հաւաստութիւնն ա-
մենուն համար, ինչպէս Պաղլարին
նոյնպէս նաև Հայուն, իսլամին, Յոյ-
նին և այլն : Այս կը պահանջէ ընդ-
հանուրին շահը : Կարծենք Սնդղիա
իսկ բաժանման սկզբունքին վտանգ-
ները տեսաւ, և հիմա, թէպէտ ա-
նագան, անոնց առաջին առնուլ կը
փութայ :

Վերջապէս որչափ Տէպա լրագ-
րին Պոլսոյ թղթակցին նամակը, զոր
նոյնպէս նախընթաց թուով հրատա-
րակած ենք, ազգային դժբախտաց և
շահուց ճշդիւ պատասխանող քաղա-
քագիտական լուրջ խորհրդածու-
թեամբքն ամեն ազգասէր Հայոց չը-
նորհակալեացն արժանի է, այնչափ
Լէվընթ Հէրըլտի Հայուն խորհրդա-
ծութիւններն անխորհուրդ և ծա-
րայեղ են, որք Հայոց ազգը թէ՛ տե-
րութեան և թէ՛ բնակակից իսլամի-
զովրդոց ատելի ընելէ զատ ուրիշ ար-
դիւնք չեն կրնար ունենալ :

Հերոդոտոս (Հայր պատմագրաց) փոխ
գրական ծառայում կուտայ Հայոց, և ասոր
հաւանականութիւն տուող պատճառն այս
է որ փոխգրաւոր ինքնինքնին Ասորական
կը կոչէին, և Հայք ալ մինչև այսօր Աս-
քանական կը կոչեն զիրենք: Երկար մի-
ջոցներով իրարմէ ընդհատեալ չորս թա-
գաւորութիւն ունեցած են Հայք: Առա-
ջինն, որ ամենէն երկար տևողն էր, Հայ-
կազանց կամ Հայկայ սերունդին իշխա-
նութիւնն է, Հայկայ՝ որ Նոյ նահապետին
թոռանը թոռն էր. այս իշխանութիւնն
2000 տարիէն աւելի տևեց (Քրիստոսէ
2530—350 տարի առաջ): Երկրորդն է
Արշակունեաց իշխանութիւնն, որ 385
տարի տևեց (մինչև Քրիստոսի 453 թուա-
կանը): Երրորդն է Բագրատունեաց իշ-
խանութիւնն, որ 186 տարի տևեց (839—
1045): և վերջինը կամ չորրորդն է
Ռուբինեանց իշխանութիւնն, որ 293
տարի տևեց (1080—1373):

ՍԵՐԵՆԻՆԵ ԵՄԵՐԵՆԵ

Փարիզէն մեզ գրուած նամակ մը
կը ծանուցանէ թէ խրիմեան արա-
ղան փարիզ եղած ժամանակ այցե-
լութիւն տուեր է հոն հիմնեալ և
յաջորդ թեմամբ ծաղկեալ հայկական
գործարարին մը, այն է շատերու ծա-
նօթ իւրիսիւզեան մեծապարգ Յօհան-
նէս Էֆէնտիի գեղարուեստական և
ճարտարապետական մեծապատիւ
գործը պարծարանին, և քրտնշանա-
լով հոն տեսած ճարտարարուեստ
գործոց վրայ, բար է. «Արգարե
Երուսղիմ մէջ իմ տեսած հայկապ և
հիմնալի շէնքերէն ու ճարտարու-
թիւններէն աւելի այս ազգային գոր-
ծարարը գոհ ըրաւ զին»:

Այս առթիւ արժան կը համա-
րինք ծանուցանել, թէ յիշեալ գոր-
ծարարին տէր և անօրէն թիւյսիւզե-
ան Յօհաննէս Էֆէնտի 1867 թ ար-
ւեստահանութիւն ժամանակ Բ. Դրան
կողմէ փարիզի մէջ կարգեալ Օսմանե-
ան յանձնարարովն անգամ ըլլա-
լով, արուեստահանութիւն վերաբեր-
եալ որ ծոցը քաջ աւելեալութիւն ու-
նի. ուստի և կրնայ մեծապէս օգտա-
կար ըլլալ մեր այն ազգային, որք
արուեստահանութիւն առթիւ փարիզ
երթան: Յօհաննէս Էֆէնտիի վաճա-
ռականական և արուեստական հրմ-
տութիւնը, պատուաւորութիւնն ու
ազգասիրութիւնը ծանօթ ըլլալով
մեզ, տարակող շօնինք որ իրեն դի-
մոյները մեծապէս գոհ կրնան ըլլալ
Բայց որպէս զի բազմաթիւ զորք կամ
անարժան մարդիկ ալ անոր ազգասի-
րական ծառայութիւնն օգուտ քա-
ղելով իրեն միտ կամ ձանձրութիւն
չպատճառեն, իրեն դիմել ուղղները
կամ Պատրիարքարանէն, կամ մեզ-
նէ և կամ հանրածանօթ պատուա-
ւոր ազգայինէ մը յանձնարարական
պէտքէ ստանան իւր հասցէին հետ

... խմբագիր:

Աղէքսանդրիա բնակող բարեսէր
և ազգասիր մեծապատիւ ազ-
գային մը տալով պարկ (չորս հարիւր
քաշ) բրինձ շնորհեց Ազգ. Հիւան-
դանոցի խղճալի պատասպա-
նաւոր միւլիթարեց զանոնք, և թէ
յիշեալ Մեծ Սնտոն Արթիմօֆ Էֆէն-
տիի՝ որ փութաց միջնորդ հանդի-
սանալ ձեռնառու բարերարին:

1878 տարի 19 Միտմը յարգանք
Դրաս. Հիւ. ի դիմաց Հոգ. Հիւ.
Սեմ-Նոր խան Սեմեթի Մ. Մեմեթի



Յաւօք արտի կը ծանուցանենք
թէ ազգային երեսփոխան և Նոր
Դար լրագրող խմբագիր Խօծասար-
եան Օգոսէն Էֆէնտի, որ ժամտա-
տենդէ բռնուած էր, բժշկաց ամեն
ջանից հակառակ՝ չիրիսով լուծիլ
երէկ ժամութիւն իւր մահականացուն
կնքեց ի հասակի 43 ամաց, և վաղը՝
կիրակի՝ ժամ 7 ին յուղարկուեալ
թեման տխուր հանդէսը պիտի կա-
տարի Սամաթիոյ Ս. Գէորգ. եկեղե-
ցին:

Օգոսէն Էֆէնտի չորս գծադր. դա-
ւակ կը թողու փոքր հատակի մէջ
առանց սպրտաւոր և պաշտպանի:
Ահա տալի ազգային ծառայութիւնը
նոյ Հայ խմբագրի մ'ապագան:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻՔ

ԿԱՐԳԻ ԱՆԱԳՈՒԹՅՆՆԵՐ ԵՒ ԱՐՈՐՈՒ-
ՂՈՒԹՅՆՆԵՐ ԱՐԲՈՒՆԵԱՅ ՅԵՐՈՒՊՈՒ

(Եր. և Էր. Դ. Բ. 2113)

Երուսղիմ մէջ Գաղղիական լեզուն
գեալ զիւսանողիտական լեզուն չգործած
Լատիներէն կը գործածուէր: Ամենէն
հոգեւորականները զաշխարհութիւնը Լա-
տիներէն գրուած են: Գիւսանողիտա-
կան գրուածները իսկաւ հին առեւել
ի վեր այլ և այլ անուններ ու ձևեր ունե-
ցած են: Յիշեմք մի միայն պատական հը-
րովարտանքն (այլ) ու կոնկալներն
(պրէֆ): Առաջինը վրայ Պապին գնաձե
կապարեայ կնիքը կայ, վրան Պօղոսի և
Պետրոսի առաքելոց պատկերներով և
ժամանակին տեղի Պապին անուամբը:
Այս հրովարտակա մագաղաթի վրայ գըր-
ւած պիտի ըլլայ գոթական գրերով մա-
ղաղթիկն անուորի երեսին վրայ: Եթէ
հրովարտակը չնոր՝ մը կամ նուէր մ'ը-
նելու համար գրուած է, մետաքսեայ նա-
րտով մը կապուած կըլլայ: Իսկ եթէ
ընդհակառակը՝ դատապարտութիւն մը
պարտական է, նարտը կանեփէ կըլլայ:
Կանգալն առաջինը չափ արարողութիւն
ներ չունի. մաղաղթիկն հարթ երեսին
վրայ կը գրուին արդի գրերով և Պապին
անձնական կնիքը կը կրէ: Զմեռանք յի-
շել որ Պապը վախճանած ատեն, Երու-
սղիական տէրութիւնը սուգ չեն բռներ,
վասն զի՝ ըստ Հռոմէական վարդապետու-
թեան՝ Սրբազան Պապը Թաթարաց Մեծ
Լամային պէս բնաւ չմեռիր:

Այսքան զիւսանողիտական կարգա-
դրութեանց մէջ տեղ թէ և պատերազմ
մի 19 տեսակը կը համարուի, սակայն և
այնպէս գարտախալին այն է որ պատե-
րազմ հրատարակելու համար մասնաւոր
ձեւագիր մը չկայ. իւրաքանչեւ տէրու-
թիւն ինչ կերպ գրուցուածք որ ուզէ զայն
կը գործածէ: Գաղղի զաշխարհոց, ասոնք
ալ բազմաթիւն են. գաղղիութիւններն
աւելանալէ և անքաշանէլէ՝ Երուսղիմէն
անուան տեղեւ գնելու սովորութիւնը շատ
ատենէ ի վեր անյայտ եղած է: Իրաւ
է որ Գերմանացիք Բրախայի գաղղիութե-
ան առթիւ վերտոն երեսն հանեցին
այդ սովորութիւնը, բայց աւելի լաւ կըլ-
լար եթէ չընէին այդ բանը, վասն զի
Բրախայի գաղղիութիւնն այդ պատ-
ճառաւ աւելի լաւ չարագոյնացաւ իւր բա-
րեպաշտ ստորագրողին կողմանէ: Այժմ
իւրաքանչեւ գեալանք այսուրեքին կարգաւ
կ'առարարեն գաղղիութիւնը: Ատենօք
այս ստորագրութիւն իսկաւ գրեւոր զի-
ճերու պատճառ կ'ըլլար, և այս բանին
առաջին ատենը համար այլ և այլ ժամա-
նակի գաղղիական միջոցներ ձեռք առնուե-
ցան: Այսպէս 1718 թ Երուսղիմի իրաւակա-
ցութեան առեւել մէջ մի լրագրող երես-
փոխան իրեն քով մնալիք պատճէնը նախ
ինքն ստորագրեց: Իսկ 1848 թ. Երա Լա-
ճարէլի գաղղիութեան ատեն ընդհա-
կառակն՝ մէջ մի աշխարհեան ներկայա-

ցուցիչ ո՛րչափ գաղղիութեան կային, այնքան
պատճէն ստորագրեց:

Վեհապետական տիտղոսները իսկաւ
բարեմիւս են. զորքիկն կայսր, ար-
քայ, մեծ դուքս: Այս վերջին տիտղոսն,
որ Ռուսական ծաղուռն ունի, և զոր Պի-
տ Ե. քահանայապետը նախ և առաջ չը-
նորհեց Կոնստանտնուպոլիս, այսօրեան օրս
միայն Գերմանիոյ մէջ կը գործածուի իւր
վեհապետական տիտղոս: Կայսրընախ
տիտղոսն առից մի դար յառաջ կեղծու-
նական Երուսղիմ մէկ մեծ տէրութիւնը
կը նշանակէր. բայց հետզհետէ կարեւո-
րութիւնը կորցաւ, և Սատովայի պատե-
րազմէն վերջը Հէո—Քասէլի կայսրնա-
րութեան Բրուսիոյ հետ միացմամբ վերջ-
նական կերպիւ մարեցաւ: Յիշեմք մի քա-
նի հին ու նոր վեհապետական տիտղոս-
ներ ևս. Զար, Մարկիա, Լանտիւրա,
Գուքս, Պաշտպան, Սթաթ-Նուար, Հոս-
փոտար, Սուլթան, Խալիֆա կամ Ամի-
րապետ, Շահ, Շէյխ, Մէյիւ, Խան և
Խոյր: Խոյր կըսուին Մարդարէին սերուն-
դէն եղունքն, որոցմէ խիստ յազանթիւ
կը գտնուին ի Տաճկաստան և յԱրարիա,
մասնաւորապէս մուրացկանաց մէջ. ա-
սոնք միայն կանաչ փաթիւնց կրելու ար-
տօնութիւն ունին: Վեհապետական տիտ-
ղոսներէն շատն այնպիսի բերդապաշտ-
ներէ կամ երկիրներէ ծաղուռն առած են,
որոց հետ այդ տիտղոսները կրողներն ա-
մենեւին տանելիք տալիք մ'ունեցած չեն:

Օրինակի առաջաւ, Սարտենիոյ թագա-
ւորն ինքզինքը կանուանէր նաեւ արքայ
Կիւրոսի, Սիկիլիոյ և Երուսղեմացի:
Յնդիկոյ թագաւորը միայն թէ գործուն
վերջը ինքզինքնին Գաղղիոյ թագաւոր
անուանելէ ետ կեցան: Յիշեմք տարուց
չափ կայ որ Բորդուկալի թագաւորը «Պա-
ղաւոր Բորդուկալի և Այկարիայ» տիտ-
ղոսին վրայ աւելցուցած է նաեւ «Տէր
Կուրիէի և ծովային ճանապարհաց և վա-
ճառականութեան Նիւֆուլիոյ, Արաբիոյ,
Պարսկաստանի և Հնդկաց» տիտղոսը:
Արեւելեան թագաւորաց տիտղոսներուն
չափազանցութիւնը ամենուն յայտնի են.
ասոնց ամենէն սիրելի մակերէն է «Ար-
քայից արքայ» տիտղոսը. Ռուսիոյ կայս-
րը և Տաշիմարայի թագաւորը երկուքն
ալ միանգամայն ինքզինքնին կանուանին
Գուքս, որոցմէ Շէյխ-Շէյխ-Շէյխ, Թոն-
մարի, Տիւրմարի և Օլաղայապետի: Գաղ-
ղապետը մէջ գաղղիականաց բոլոր իրական
կամ անգղ պատուանուններն յիշուելուն
պատճառաւ սովորութիւն է յարել նաեւ
անոնց ետեւէն Նշ. Բրէճէ—Գիւսան: Բաւը
որ կը նշանակէ թէ այդ թագաւորութեան
բնաւ պաշտօնական հետեւութիւն մը չը
ծագիր, այլ միայն առ ի դարձ գործած-
ուած են: Կրօնականաց պատուանունաց
գաղղի «Նորին Սրբազանութիւն» տիտղոսը
միայն թիւ դարէն ի վեր է որ Հռոմէա-
ղաւանք Պապին յատկացուցած են. այդ
թագաւորն անէն յառաջ եղալիպատաց և ար-
քայից ալ կը գործածուէր. իսկ «Վեհա-
պետութիւն» բառը ժամանակաւ Երու-
սղեմաց մէջ բոլորովին եկեղեցականաց
վերաբերեալ մակերէն մ'էր, որ ապա
Գերմանիոյ կայսերաց անցաւ, և միայն
1751 էն վերջը սկսան միւս թագաւորը
ալ գործածել, վասն զի ասոնք, ինչպէս
նաեւ եղալիպատուներ, անկից առաջ միայն
«Բարձրութիւն» տիտղոսը կը կրէին: Այս
տիտղոսն առաջին անգամ Մեղղիա մըտ-
ցնողն եղաւ Հերիկոս Բ: Հօլթէյնի
գուքս մը «Երկնային թագաւոր» կան-
ուանէր ինքզինքը. «Թէն—Օ» մակերէնը
որ կը նշանակէ «Երկնային ամենէն մեծը»
2500 տարիէ ի վեր ճարտի կայսերաց
պատուանունն է:

Մի քանի խօսք ալ տալետութեանց
և շքանշանաց վրայ խօսիմք: Առնցմէ 8
հատ կան Ա. կարգի, յորոց ամենէն հի-
շերն են Մեղղիապետ Սեղղիական կար-
գը և Շուէտի Սերպիլից կարգը. միւս-
ներն են Ս. Անդրէաս Ռուսիոյ, Սեւա-
Սրժիւ Բրուսիոյ, Պաուլոյ Լէզէն Գաղ-
ղիոյ, կարգ Սեւաւան Խալիֆայ, Ռսկե-
գեղման Աստուրի և Սպանիոյ, Օսմանից
Տաճկաստանի եւ: Երկրորդ կարգէն են
Տաճկապետ Տաշիմարայի, Բեւեռական
Աստուր Շուէտի, Կարմիր Արծիւ Բրուսիոյ,
Բաղանեաց Սեղղիոյ, ինչպէս նաեւ մի-
միայն զիւստական շքանշանք Ս. Գէոր-
գայ Ռուսիոյ, Երկաթէ Խաչին Գերմա-

նիոյ, Մարիամ Թերեզայի Աստուրիոյ,
Վիկտորիայի Խաչին Սեղղիոյ եւ: Երրորդ
կարգի տալետութիւնք 500 էն նուազ
չեն՝ 45 երկրի բաժնուած:

Խիստ հետաքրքրական տեղեկութիւնք
կրնային տրուել նաեւ զանազան ազնուա-
կանութեան շքանշանաց վրայ, ինչպէս են
Խլան, Գուքս, Մարքիզ, Կոմս, Պարոն,
Ասպետ եւ: ինչպէս նաեւ զօրակաց, վա-
հանակաց, զինանշանաց և համազգեստից
վրայ, բայց տեղւոյս անձկութիւնը չնե-
րելուն համար այսչափով կը բաւականա-
նանք:

Ա. Զ. Դ.

ՄԱՍՆԱԺՈՂՈՎ ՕՍՄ. ՊԱՐՏԱՏԵԱՐՑ
Ի ԹՈՒՐԻՔԻԱ

Կը ճանուցուի հասարակութեան
թէ Օսմանեան պարտատեարց մարտ
9/21 ի ընդհանուր ժողովին մէջ քը-
ւէարկեալ որոշմանց մէկ օրինակը հե-
տեւեալ հաստատութեանց ամեն մէ-
կուն մէջ գրուած է, ստորագրու-
թիւն ստանալու համար:

Պանք Էնթեպիս Օթման.
Քրէտի Լիօնէզ.
Պանք տը Բօնաթանթինօրլը.
Սօսիթիէ Ժէնէպալ տը Լ'Անրիւ Ս.
թման.

Քրէտի Ժէնէպալ Օթման.
Սօսիթիէ Օթման տը Շանթ է տը
Վալէօն, և

Մօսկա Ռ. Ջուշիկի գրասենեակը Ղա-
լաթիա Գէորգ պէյ խան, 12:

4

Ե. Զ. Դ.

ՏՈՒԹՈՐ ՄԻՀՐԱՆ ԷՖԷՆՏԻ ԿՐՃԻԿԵԱՆ

Կ. Պօլսոյ արքունի բժշկական վար-
ժարանին գասերն աւարտելով վկա-
յադիրն (տիւրօմ) ստանալէն վերջը ե-
րեք տարի փարիզի բժշկական վար-
ժարաններուն մէջ ներքին հիւան-
դութեանց և մասնաւորապէս ջղային
հիւանդութեանց աշխատեալ բժշ-
կական արուեստին ուսումն յաջողու-
թեամբ կատարեալագործած և փարի-
զի բժշկական ճեմարանէն ալ փառա-
ւոր վկայական մ'ստանալով Կ. Պօլսո
վերադարձած ըլլալով, ամեն ազգի
ազգայնները ձրիաբար դարմանելու
նպատակաւ՝ երկուշաբթի, չորեք-
շաբթի և ուրաթ օրերը ժամ 9 1/2
էն մինչև 11 Պէշիկմաշ վափոր իս-
կէլէսի փողոցին դէմը թիւ 90 գեղա-
րանը կը գտնուի: Իսկ ուրիշ ժամա-
նակ իրեն պէտք ունեցողը կրնայ Պե-
շիկմաշ Լէնիմահալէ յիտակ ճանրան
թիւ 48 իւր բնակարանը մտնուել
զինքը:

Ի Լ Ա Ն

Շիրքէթի խաչերէ խաչերէ թա-
րափնտան մուգատեւած չըգարըմը
օլան օն վէ իկիւմի փարալը մարդա-
լէր պա էմրի ալի թէտալիլուտէն մէն
օլուուդի ճիհէթէ, իշպու մարդ ալէր-
տէն հէր քիմին Ետանտէ վար իսէ
իշպու թարիխտէն Թօքսան տէօրտ
սէնէսի հաղիրան զայէսինէ գատար
Շիրքէթ վա օրէրինէ վէ եախօտ ի-
ստարէթանէյէ կէթիրուպ թէպալի իշ-
լէմէլէրի լուզումու Շիրքէթի խաչերէ
թարափնտան իլան օլուուդը:
20 Նիսան 1294

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՄԱՆՈՒԿԵՐՈՒ ԱՐԲԱՆՈՒԹԻՒՆ
ԸՆԹԵՑԱՐԱՆ
ՀԱՐՑ ԵՒ ՄԱՐՑ ՀԱՄԱՐ
Դրեաց Ս. Տէր Սեբեթեանց

Ամեն Հայ գրաւաճառաց քով կը
գտնուի: Դին մէկ հինգնոց թղթա-
գրամ:

ՍԻՐԱՔ ԵՒ ՍԱՄՈՒԷԼ

ԲԱՐԻ ՀՈՐ ԿՐԹԱԿԱՆ ԴԱՄԱՐ

ԳՐԵՅ ԽՐԻՍՏԻԱՆ ՀԱՅՐԱԿ

Եւ ի լոյս ընծայեցին աշխարհին եւ ի լոյս
Յաճախեալ Սիւրբ Էստեփան

Ի ՆՈՒԷՐ

ՀԱՅՈՑ ՀԱՐՑ ԵՒ ԶԱՐԳԱՅԵԱԼ ՈՐԳԱՆՈՅ

Կը ծախուի ամեն հայ գրական-
ճառաց քով. գին մէկ քսաննոց թըղ-
թաղում:

Շ Ի Թ Ք Մ Ա Ն Ո Ւ Ն Ք

Ի ՄԻՋԵՐԿԱՐԱԿԱՆԵ

Երկարորեաց Հմայեակ Թ. Վ. Գրիգորեան

Օտարականութեամբ

Ետպահակեան եղբայր Հարապատաց

Մայրաքաղաքէս մինչև Եգիպտոս
և Երուսաղէմ 32 քաղաքացի և գիւ-
ղորէից վրայ վիճակագրական շահա-
ւէտ տեղեկութիւններ պարունակող
368 երեսէ բաղկացեալ գիրք մ'է,
Հայաստանեայց անուն ապարանք մը
եղած:

Կը ծախուի Եֆէսի գաբուրի և Մայր
Եկեղեցեաց բանկաներն և Կ. Պոլսոյ
Հայ գրականաւոց քով. Գին կէս ար-
ծաթ մէճիտէ:

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ա. Ռ. Ա. Զ. Ի. Ն. Տ. Ե. Բ. Ի. Ք.

Քեքէլեան, Մահ Սիւրբայ, Զառ, Զ.

Ա. յ. Լ. ալ, Զառ, Զառ:

Հեղինակն իւր ինչ ինչ ոտանաւոր
և արձակ գրութիւններն և Լամարգիւնի
Գաղղիայի բանաստեղծին Սիւրբայ
Հանուն գրադար տաղաչափեալ թարգ-
մանութիւնն ամբողջած է սոյն զըր-
բուկին մէջ:

Կը ծախուի Եֆէսի-ճամբի Չիլինկիր-
ի ճատտէսի թիւ 2, Ս. Ղ. և Ետպ-
ահեան գրատունը, և ուրիշ գրաւ-
վածաւոց քով. Գին 1 քսաննոց թըղթ

ՄԱՐԻՈՆ ՏԵԼՈՐՄԻ ԽՈՍՏՈՎԱՆԱՆԲԸ

Կ Ա Ս

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐԺԱՆՔ

Հեղինակն Լամարգիւնի Սիւրբայ

Թարգմանց Գր. Չիլինկիրեան

Սոյն նշանաւոր վէպին հինգերորդ-
այն է վերջին հատորն ալ իղմիրի Տե-
տէան եղբայր տաղարանէն Պոլսոյ հա-
սած ըլլալով կը ծախուի Եֆէսի ճամբի
Չիլինկիրէր ճատտէսի թիւ 2 Ս. Ղ. և
Ետպահեան գրատունը և ուրիշ գրական
ճառաց քով. Գին 2 քրանք:

Թ Ո Ր Ո Ս Լ Ե Ի Ո Ն Ի

ԳՐԵԱՅ ԾԻՐԵՆՅ

Սոյն գեղեցիկ վիպասանութեան
թիւնէն որոյ պատմական աղբիւրը
Ռուբինեան հարստութիւնէն առնուած
է, և որ Բիբիստոսի 1145 թուականին
Հայոց կիլիկիոյ մէջ վերստին ձեռք
բերած իշխանական մեծութեան ճըշ-
գրութեամբ պատկերն է, ամեն Հայ
պէտք է վրաժայ մի օրինակ ունենալ

Կը ծախուի ամեն գրականաւոց
քով. Գին 2 քրանք:

ԽՈՐՀՐԴԱՆՈՐ ԿԶԶԻ

ԸՆԿԵՑԻԿ ՄԱՐԿԸ

Ժիւլ Վէրն անուանի հեղինակին
սոյն հետաքրքրաշարժ և հրահանգիչ
գործին Գ. այն է վերջին հատորն ալ
իղմիրէն հասած ըլլալով, կը ծախուի
Եֆէսի ճամբի Չիլինկիրէր ճատտէսի թիւ
2, Ս. Ղ. և Ետպահեան գրատունը
և ուրիշ գրականաւոց քով. Գին 2 քրանք:

ԱՐԻՒՆԱԼԻ ՄԱՐԳԻՋՈՒՆԻ

ՀԵՂԻՆԱԿ

Տալ Կոմսանի

Թարգմանց Թ. Կ. Պարունուկեան

Սոյն գեղեցիկ վիպասանութեան,
որ միայն երկու հատորէ կը բաղկա-
նայ, երկրորդ հատորն ալ իղմիրէն
հասած ըլլալով, կը ծախուի Եֆէսի
ճամբի Չիլինկիրէր ճատտէսի թիւ 2
Ս. Ղ. և Ետպահեան գրատունը
և ուրիշ գրականաւոց քով. Գին 2 քրանք:



ՇԻՐՔԵԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇՈՂԵՆԱԿՆԵՐՈՒՆ ԵՐԹԵԻՆԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1878 ԱՊՐԵԼ 1 ՇԱՐԱԹ ԹՐԷՆ ՄԿՍԵԱԼ

ՄԻՆՁԵՒ ԱՊՐԵԼ 30

ԿԻՐԱԿԻ ԹՐԵՐԸ ԲԱՆՈՂ ՇՈՂԵՆԱԿՆԵՐԸ

Ժամ	Իսկանդար Եփեսոս
11 30	Եփեսոս, Սիւրբ. Պէտք. Թարապ. Եփեսոս. Սիւրբ. Եփեսոս. Բ. Հիսար, Պէտք. Եփեսոս. Եփեսոս. Սիւրբ. Եփեսոս.
12	Պէտք. Եփեսոս. Բաշա. Գառ. Եփեսոս. Գառ. Եփեսոս. Գառ. Եփեսոս. Գառ. Եփեսոս.
11 45	Եփեսոս. Եփեսոս. Գառ. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս.
1	Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս.
1 15	Պէտք. Եփեսոս. Գառ. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս.
1 45	Բ. և Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս.
3	Պէտք. Եփեսոս. Թարապ. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս.
3	Միւս. Պէտք. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս.
4	Եփեսոս. Եփեսոս. Պէտք. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս.
5 15	Եփեսոս. Եփեսոս. Պէտք. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս.
6 15	Եփեսոս. Պէտք. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս.
8 45	Պէտք. Եփեսոս. Թարապ. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս.
8	Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս.
8 45	Պէտք. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս.
10 15	Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս.

Կոմսանի Եփեսոս



ԱՆԵՐԻ ՎԻԿՈՐԸ

Ով որ իր մաղերուն թափելը չու-
ղեր, «Անիկի վիկոր» կոչուած մաղի
անուշահոտ ջուրէն գործածելու է.
ուրիշ ամեն տեսակ մաղի ջուրերը
կամ իւրերը որ մաղ չի թափելու հա-
մար կը ծախուին, իւրիշ ալ անօգուտ
են. իսկ վիկորի օղուտը միլիոնաւոր
փորձերով տեսնուած է, և Պոլսոյ ու
Ետպահեան մէջ օր օրի գործածող-
ներուն թիւը կ'աւելնայ: Անոնք որ
իրենց մաղերուն գեղեցիկութիւնը
կորսնցնելու վրայ են, չուտով գոր-
ծած են ալ ջուրէն որ ի վերջոյ չղջան
Թափելու վրայ եղող մաղերը կը հա-
տառէ ու կ'ամրապնդէ, թափածնե-
րուն տեղը մաղ կը բուսցնէ երբ
մաղերուն արմատը քիւսուած չէ,
ու ճերմկած մաղերը անպատճառ
իր նախկին բնական գոյնին կը բերէ,
գործածելուն կերպը չի փոխու
է. կը ծախուի Կ. Պոլսոյ Ղալաթիա
Միլիոնեան և Ընկերաց Ամբրիկայի
Մաղաւան:

ՕՃԱՌ
Անուշահոտ օճառ, մոր-
թը կը կաւորացնէ ու
Եփեսոս ջուրով ալ կը փը-
րըրի, տեսակը խիստ
աղին ու գինը շատ աման է. կը
ծախուի Կ. Պոլսոյ Ղալաթիա Միլիոնե-
ան և Ընկերաց Ամբրիկայի մաղաւան:



ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԱՂԱՅԻ

Կ. Պոլսոյ Ղալաթիա Միլիոնեան և
Ընկերաց Ամբրիկայի Մաղաւան կը
ծախուի, աղին ճերմակ կուտան,
ու սեղանի ծածկոց և այլն, սեղանի
արծաթած պատառաքաղ, գրգալ
և այլն. կաղի լամբաներ, սեղանի
ճերմակ յալճապակի սպասք Անգ-
ղիոյ տեսակէն, քարեօղաներ, փիքէ
ծածկոց, քիւսնէ սպան և այլն, խո-
հանոցի վերաբերեալ անօթներ, կա-
րի գործիքներ, և ուրիշ անթիւ պի-
տանի վաճառք կը ծախուին չափա-
ւոր գներով:

2	Պէտք. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս.
2 30	Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս.
3 15	Պէտք. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս.
5	Պէտք. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս.
6 30	Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս.
8 15	Պէտք. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս.
9 45	Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս.
10	Պէտք. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս.
10 30	Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս.
10 30	Պէտք. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս.
10 30	Սիւրբ. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս.
11	Պէտք. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս.
11	Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս.
11 35	Պէտք. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս.
12	Պէտք. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս. Եփեսոս.

ԻՍԿԱՆԴԱՐ ԲԱՆՈՂ ՇՈՂԵՆԱԿՆԵՐԸ

Ժամ	Իսկանդար Եփեսոս	Կոմսանի Եփեսոս	Իսկանդար Եփեսոս
12	6 35	12 15	7 45
12 30	8	12 45	8 20
1	8 30	1 15	8 50
1 30	9	1 45	9 20
2	9 35	2 15	9 50
2 30	10	2 45	10 15
3	10 20	3 15	10 40
3 30	10 45	3 45	11
4	11 5	4 15	11 20
4 30	11 25	4 45	11 40
5	11 40	5 15	11 50
5 30	12	5 45	12 5
6		6 20	

ՈՒՐԱԿ ԵՒ ԿԻՐԱԿԻ ԹՐԵՐԸ

Ժամ	Իսկանդար Եփեսոս	Կոմսանի Եփեսոս	Իսկանդար Եփեսոս
12	5 30	12	5 35
12 30	6	12 30	6
1	6 35	1	6 40
1 30	8	1 30	8
2	8 40	2	8 45
2 30	9 15	2 30	9 20
3	10	3	10
3 30	10 30	3 30	10 35
4	11	4	11 5
4 30	11 30	4 30	11 35
5	12	5	12 5

Այս քաղաքը շատ անգամ
զը հրաճարակուի, երբեք չաբ-
թի եւ շարաթ օրերը, Բաժանորդագրու-
թեան տեղերն են Ղալաթիա Միլիոնեան
ճատտէսի թիւ 198, Նորո խան Մաթի
խմբագրատունը:

Իսկ գաւառացի մէջ հետեւեալ հոգա-
բարձուաց սենեակները:

ԻԶՄԻՐ. Ստանբուլի աղա Տէտէան.
ՆԻԿՈՒՄԻՒՄ. Խոսրով Էփ. Եփեսոս.
ՊՐՈՒՍՏԱ. Ստանբուլի աղա Թանկերեան.
ԹԵՔԻՐՏԱՂ. Յովսէփ. աղա Ուղուե-
տիկեան.
ՏՐԱՊԻՋՈՆ. Խաչատուր աղա Միլիոնեան
ԿԱՐԻՆ. Կարապետ պատուելի Զա-
բարեան.

ՎԵՆ. Կարապետ աղա Նաթանեան.
ՄՈՒՇ. Մկրտիչ աղա Փօթիկեան.
ԵԱՇ. Մ. աղա Խաչիկեան.
ՅՈՒՐՏԱՆ. Ֆէրիտ աղա Ս. Ֆէրիտեան
ԵՐԶՆԱՅ. Թաղեալ աղա Բաղր-
տունի:

ՍԻՎԵՐՔԻՍԱՐ. Արթ. Ռ. Բէն.
Ուրիշ քաղաքներէ ստորագրող ու-
ղողներն ալ տեղերէն մէկուս հետ կ'ընեն
թղթակցիլ:

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ

Կ. Ս. ԻՆՏԵՐՆԱԿԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ

ԳԱՆԱԶԱՆՈՐՈՒՄ